ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

26.03.2019թ.

ք. Երևան
ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ ԳԱՊ գնահատման պատասխանատու
Խաչիկ Կարապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԳԱ-գնահատող անձնակազմ
Նանե Քալաշյան
Հայկ Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԲԱ-բացող անձնակազմ
Գարիկ Մկրտչյան
Թոմաս Զուլալյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Տիգրան Սաֆարյան:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի և մասնակիցների հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2019 թվականի մարտի 25-ին ներկայացվել է եզրակացություն՝ համաձայն, որի 1-ին տեղ զբաղեցրած «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն և «Վանդիստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.03.2019թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չեն ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.1 «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից և սահմանված ժամկետում ներկայացրել՝ հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը (Հավելված 6, 6.1):

1.2 «Վանդիստ» ՍՊԸ-ն՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 20.03.2019թ.-ի թիվ 3 որոշմամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից և սահմանված ժամկետում ներկայացրել՝ հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը (Հավելված 6, 6.1):

1.3 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 44-րդ և 46-րդ կետերը, «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրաց մասնակիցներին առաջարկել կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Խ. Կարապետյան

Անդամներ՝ _____Հ. Սարգսյան

_____Թ. Զուլալյան

_____Գ. Մկրտչյան

_____Ն. Քալաշյան

Քարտուղար՝ _____Տ. Սաֆարյան